Ալեքսանդր Ծատուրյան

Մի՛ վհատիր

Դարերով անբա՜խտ, դարերով թշվա՜ռ,
Իմ խղճո՛ւկ եղբայր, դու մի՛ վհատիր,
Որ կարծես ոսոխ, անզութ, անարդար
Քեզ հալածում է սև ճակատագիր:

Գիտեմ, չարության ծանր լծի տակ
Դու շա՜տ ես տանջվել ու շա՛տ համբերել.
Շա՜տ ես փափագել դու մի ա՛յլ վիճակ
Երկա՜ր հուսացել, երկա՜ր սպասել…

Բայց մի՛ վհատիր… Թո՛ղ խորին հավատ
Դեռ ալեկոծե քո տանջված հոգին.
Շատե՜րն են քեզ պես մնում հուսառատ
Ազատիչ գարնան քաջ հաղթանակին…

Եվ ի՞նչ կլիներ, թե դառն օրերին,
Մարդկային կյանքում, փոթորկի նման,
Ոսկեշող հույսեր սիրտ չլիուզեին,
Հավատը զոհվեր հուսահատության…

Վաղուց մարդկությունն անհույս, ցավագար
Վշտերի ծովում կլգտներ վախճան.
Չոր անապատի կլփոխվեր աշխարհ,

Կյանքը կըդառնար մըթին գերեզման…

1893